ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7»դեկտեմբերի 2015թ. N 809-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում 2015-2016 թվականներին հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N456-Ն որոշման հավելվածի 2-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է հատկացնել 40 000 000ՀՀդրամ, որից 8 000 000 ՀՀ դրամը 2015 թվականի պետական բյուջեով «Թթայգիների զարգացման ծրագիր» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, մյուս մասը կնախատեսվի 2016 թվականի պետական բյուջեով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

/ՀՀ դրամ/

Ներդրումներինպատակը	***Ընդամենը***	***Այդթվում՝***							
		2015թվականին՝ Ըստ եռամսյակների				***2016 թվականին ՝ Ըստ եռամսյակների***			
		1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***	***1-ին***	***2-րդ***	***3-րդ***	***4-ր***
Թթենու տնկիների տրամադրում	40 000 000			8 000 000		32 000 000			

Նշված ֆինանսական միջոցներով «Ասմարյան Գրին Լանդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Սիրիայի Արաբական Հանրապետությունից ձեռք կբերվեն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կներկրվեն մեկից երկու տարեկան թթենու բարձրորակ տնկիներ:

Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (այսուհետ՝ վարչակազմեր) կողմից սահմանված ժամկետում, հիմք ընդունելով հողօգտագործողների թթենու տնկիների պահանջարկի մասին դիմումները, անձնագրերի պատճենները, իսկ թթայգի հիմնադրելու դեպքում նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական, վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրվում է համապատասխան տեղեկանք) պատճենները, վարչակազմերին են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, պահանջվող տնկիների քանակը, իսկ թթայգի հիմնադրելու դեպքում նաև վկայականի համարը:

Վարչակազմերը մինչև 2015 թվականի դեկտեմբերի 15-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում համապատասխան հայտեր՝ նշելով համայնքը և պահանջվող տնկիների քանակը:

Նախարարությունը ներկայացրած հայտերի հիման վրա տնկիներն տրամադրում է վարչակազմերին, իսկ վարչակազմերը տնկիներն անհատույց տրամադրում են հողօգտագործողներին՝ նպատակային օգտագործման և պատշաճ մշակության պայմանով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով տնկիների տրամադրման գործընթացի, տրամադրված տնկիների նպատակային օգտագործման և պատշաճ մշակության վերահսկման նպատակով ստեղծվում է հանձնաժողով:

Տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում կամ ոչ պատշաճ մշակության հետևանքով չորացած տնկիների արժեքը (մեկ տնկու արժեքը կազմում է 2 000 ՀՀ դրամ) հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ